ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 885-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2003.08.04/40(275) Հոդ.742	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	29.05.2003
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	23.07.2003
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	28.07.2003
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2004	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
28 հուլիսի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2003 թվականի N 885-Ն

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ կետի 31-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել արդյունաբերության կարիքների համար շրջանառու ջրամատակարարման համակարգեր ներդնելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2003 թ. հուլիսի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
մայիսի 29-ի N 885-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ՆԵՐԴՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում է արդյունաբերության կարիքների համար, անկախ տեխնոլոգիայով պահանջվող ջրի որակից, շրջանառու ջրամատակարարման համակարգեր ներդնելու կարգը:

2. Արդյունաբերության կարիքների համար ներդրված ջրամատակարարման համակարգերը կարող են լինել շրջանառու, ինչպես արդյունաբերական կազմակերպության ամբողջական ջրամատակարարման, այնպես էլ դրա առանձին արտադրամասերի համար: Շրջանառու ջրամատակարարման համակարգերը ենթակա են ներդրման բոլոր այն արդյունաբերական կազմակերպություններում, որտեղ՝

ա) ջուրը ծառայում է որպես ջերմակրիչ (հովացման միջոց)՝ ագրեգատների հովացման և շոգու խտացման համար.

բ) ջուրը ծառայում է որպես մեխանիկական խառնուրդների փոխադրման միջոց.

գ) արդյունաբերության կարիքների համար օգտագործվում է խմելու որակի ջուր.

դ) ջրամատակարարման աղբյուրները սահմանափակ են:

3. Շրջանառության ընթացքում տեղի ունեցող ջրի կորուստները վերականգնվում են, որոնք կարող են կազմել շրջանառության մեջ գտնվող ջրի ելքի մինչև 6 տոկոսը:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված պայմանների առկայության դեպքում շրջանառու ջրամատակարարման համակարգերի բացակայությունը դիտվում է որպես Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջների խախտում և հիմք է հանդիսանում ջրօգտագործման թույլտվության կասեցման համար:

5. Արդյունաբերական օբյեկտներում շրջանառու ջրամատակարարման համակարգերը ներդրվում են արդյունաբերական կազմակերպության միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**